# ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ. Ա. ՎՐՈՒՅՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

***Խորեն Գրիգորյան***

## Նախաբան

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Նիկողայոս Մառի կողմից կազմակերպված Անի միջնադարյան քաղաքի պեղումները համընկան Օսմանյան կայսրության կողմից ձեռնարկված և ապա «Նոր Թուրքիայի» կողմից իրականացված հայ ժողովրդի տեղահանման ու սպանդի արհավիրքի հետ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ ոչ մի կապ չունեն այս երկու իրադարձությունները, եթե հաշվի չառնենք ժամանակաշրջանը:

Ահա հենց այս պեղումների ընթացքում էլ Ն. Մառի արշավախմբում գտնվող Արամ Վրույրի կողմից մի շարք լուսանկարներ արվեցին, որոնք այս կամ այն կերպ չեն կարող շրջանցել Առաջին աշխարհամարտի ընթացքնում իրականացված մի ամբողջ ազգի տեղահանումն ու ոչնչացումը՝ դրա հետ մեկտեղ ոչնչացնելով այն մշակութային ժառանգությունը, որի կերտողն էր այս ժողովուրդը: Ա. Վրույրի լուսանկարների հավաքածուի դիտարկումն էլ հենց այս հոդվածի հետազոտության նյութն է:

Լուսանկարչության վերաբերյալ առկա բազմաթիվ ուսումնասիրությունները՝ վերջինս դիտարկում են որպես միջոց, որը կրում է կոլեկտիվ, անհատական հիշողությունների ամբողջությունը [Paul Cobley and Nick Haeffner 2009, էջ 125]: Սակայն հաճախ տվյալ լուսանկարները հանդես են գալիս ոչ թե որպես միջոց, այլ հենց աղբյուր և իրենց կրած երկրորդական դերից տեղափոխվում են առաջին պլան:

Այս հոդվածը խնդիր ունի դիտարկելու թանգարանային լուսանկարների հավաքածուն, որպես ցեղասպանության հիշողության առաջացման ոչ թե միջոց, այլ կրող: Հետազոտության նյութը ՀԱՊԹ[1]-ի Արտաշես Վրույր անունը կրող թանգարանային լուսանկարների հավաքածուն է: Արտաշես Վրույրը իր մանկության և պատանեկության տարիներին (1901-1917 թթ.) եղել է հռչակավոր Անիում, որտեղ նրա հայրը՝ դերասան Արամ Վրույրը, Ն. Մառի գիտարշավախմբի հետ տարիներ շարունակ մասնակցել է հնավանդ քաղաքի պեղումներին [Ա. Վրույր, 1964 թ., էջ 3]:

Որպես մեթոդ կիրառելի է եղել լուսանկարի ուսումնասիրությանը վերաբերող համաշխարհային գրականությունը: Հիմնական շեշտը դրված է 1892-1916-ական թթ. պեղումների ընթացքում կատարված լուսանկարների դիտարկման վրա, որոնք կործանարար արհավիրքից առաջ մի շարք հուշարձանների փոշիացման իրեղեն փաստեր են:

---

[1] Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան:

**Լուսանկարը թանգարանում (Photograph in the museum)**

Լուսանկարը թանգարանում ներկայացնում է որևէ հանրույթի պատմությունը, մշակույթը, վերականգնում է ժամանակաշրջանի այնպիսի մանրուքներ, որոնք չեն գրվել գրքերում, որոնք չեն ներկայացվել թերթերում, սրանք առավել վիզուալ (տեսողական) նկարագրություններ են, որոնք թույլ են տալիս առավել պատկերավոր դարձնել պատմական իրողությունները, որի ընկալումը անհատի, հասարակական խմբերի, էթնոսի, ազգի մոտ տարբեր է, և միայն ընդհանուր հիշողությունների դիտարկումն է տալիս անցումն այդ մասնավորից ընդհանուրին: Դա էլ հենց ուսումնասիրության տեսանկյունն է՝ դիտարկել մեկ հավաքածուի լուսանկարները՝ որպես մշակութային ժառանգության ոչնչացման դրվագներ պատկերող փաստեր:

Լուսանկարը պրակտիկա է առանց որևէ մեթոդի և տեսության: 1890-ականներից սկսած, երբ լուսանկարը դարձավ առավել հասանելի, մի շարք ուսումնասիրողներ՝ սկսեցին լուսանկարել այն մարդկանց, այն տեսարանները, որոնք ուսումնասիրում էին: Մի շարք ուսումնասիրողներ էլ կիրառում էին լուսանկարը ուսումնասիրության նյութի պատասխանները գտնելու համար [Խ. Գրիգորյան, 2011, էջ 154]: Լուսանկարի առաջին գործառույթն ուսումնասիրողի մեջ իրավիճակի վերականգնելն էր դաշտային գրառման ժամանակ: Այսինքն՝ կարելի է պնդել, որ առաջին լուսանկարները հանդես են եկել որպես հուշող միջոցներ [Ruby, Jay, 1996]: Լուսանկարի ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք հետազոտողներ: Նրանցից Ռ. Բարտը լուսանկարներում տեսնում էր տեքստեր, որոնք խոսուն էին [Roland Barthes, 1977, 15-31]: Սյուզան Զոնտագը դիտարկում էր լուսանկարը՝ որպես մշակութային ծիսակատարություն և որպես ընտանեկան կյանքի նկարագրիչ [Sontag Susan, 1973, 175-178], իսկ Ժան Բոդրիարը՝ ուսումնասիրելով լուսանկարը որպես «իր», այն տեսնում է «ընտանեկան կյանքի դիախրոնիկ հայելի» [Жан Бодрийяр, 2001]:

Ազգագրության թանգարանում եղած լուսանկարների հավաքածուները հիմնականում ազգագրական ուսումնասիրություններին կից օժանդակ նյութեր են, որը կիրառելի է ամբողջ աշխարհում [Darryn Crowe, 2003]: Սակայն որոշ հավաքածուներ ավելին են, քան որպես ազգագրական նյութի օժանդակ հատված: Սրանցից կարելի է առանձնացնել Ա. Վրույրի լուսանկարների հավաքածուն:

**Արտաշես Վրույրի լուսանկարների հավաքածուն (The photo collection of Artashes Vruyr)**

Ցեղասպանության դրվագներ պարունակող լուսանկարներ պետք չէ համարել միայն այնպիսիք, որոնք ցուցադրում են համամարդկային տեսակավորմամբ, որպես վայրագություններ, իհարկե սրանք առավել որոշակի ներկայացնում են այն հակամարդկային վերաբերմունքը, որը դրսևորվեց XIX դարի վերջից և XX դարի առաջին կեսի ընթացքում հայ, հույն և ասորի ժողովուրդների նկատմամբ: Սա իհարկե տպավորիչ է ոչ միայն ցեղասպանության ենթարկված ազգի համար, այլ նաև ընդհանուր ազդեցություն է թողնում: Սակայն ցեղասպանության դրվագներ պարունակող լուսանկարներ կարելի է համարել նաև նրանք, որոնք թեկուզ

խաղաղ պայմաններում են լուսանկարված, բայց ցուցադրում են այդ ժողովրդի (տվյալ դեպքում հայի) խաղաղ պայմանների կյանքն ու կենցաղը, աշխատանքն ու հանգիստը, ծնունդն ու մահը, հարսանիքն ու կնունքը: Սա թույլ է տալիս առավել լայն պատկերացում կազմել, թե ինչ է ոչնչացվել տվյալ ցեղասպանության ընթացքում: Այս հավաքածուի շրջանակներում մենք կդիտարկենք հուշարձաններ պատկերող լուսանկարները:

Հայոց ազգագրության թանգարանի ֆոտոֆոնդի 7744 Ֆ 488/1-595 լուսանկարներն Արտաշես Վրույրի լուսանկարների հավաքածուն է, որ ներառում է նաև Արամ Վրույրի կողմից արված լուսանկարները: Իրենց հետաքրքիր բնույթով աչքի են ընկնում ապակու վրա լուսածրված սևանկարները, որոնք Ա. Վրույրի հավաքածուի մեծամասնությունն են կազմում: Սրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի, որոնց գլխավոր բաժինը պատկանում է Ն. Մառի կողմից Անիի պեղումների ժամանակ Արտաշես Վրույրի հոր՝ Արամ Վրույրի կողմից լուսանկարված Անի քաղաքի լեգենդար վանքերին ու հուշարձաններին, ամրոցներին ու պարիսպներին, հաճախ նաև արշավախմբի անդամների լուսանկարներին: Կան այնպիսիները, որոնք ամբողջովին պահպանել են տվյալ ժամանակի շունչն ու այսօր էլ, չնայած նեգատիվ ֆոնին, կարողանում են մեզ հասցնել Անի քաղաքի շուքն ու վեհությունը: Այս տեսակի մեջ առանձնանում է հավաքածուի 246 համարի ապակու վրա արված սևանկարը, որը պատկերում է միջնադարյան Անիի հարավային պարիսպը, որից ներքև ընկած են բնական ժայռախոռոչներ և տարբեր ժամանակաշրջաններում այստեղ բնակիչների կողմից փորված խոռոչներ, որոնք առավել խորունկ և խորհրդավոր են դարձնում վաղեմի հայկական մայրաքաղաքը **[Հ.լուս.6]**: Այնուհետև իրենց շքեղ տեսքով աչքի են ընկնում Անիի պեղումների ժամանակ Ա. Վրույրի կողմից լուսանկարված այն եկեղեցիներն ու համալիրները, որոնք մեծ ազդեցություն ու նշանակություն են ունեցել միջնադարյան Բագրատունյաց Անիի՝ որպես ժամանակի հզոր քաղաք կայանալու գործում: Առանձնահատուկ են հավաքածուի 128՝ Անիի Սբ. Փրկիչ եկեղեցին **[Հ.լուս.1]**, 154՝ Անիի մայր տաճարը, 157՝ Տիգրան Հոնենցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գմբեթը պատկերող սևանկարը **[Հ.լուս.2]**, 180՝ Առաքելոց եկեղեցու գավթի քանդակազարդ ճակատը պատկերող սևանկարը **[Հ.լուս.3]**, 328՝ Մայր տաճարի ընդհանուր տեսքը պատկերող սևանկարը **[Հ.լուս.4]** և Անիի միջնաբերդի փոքր եկեղեցու մուտքը պատկերող 111 համարի սևանկարները: Այս ճարտարապետական խոշոր կոթողներն այժմ գտնվում են Թուրքիայի տարածքում, և այս սևանկարները, որոնք արվել են XX դարի առաջին տասնամյակի ընթացքում՝ գիտարշավների ժամանակ, կոլեկտիվ հիշողության ներկայացման կարևորագույն աղբյուրներից են:

Այսպես, Ա. Վրույրի կատարած գործն այսօր ավելի է արժևորվում, քանի որ մենք գործ ունենք այնպիսի հուշարձանների լուսանկարների հետ, որոնք այսօր գտնելն ուղղակի անհնար է: Այս հուշարձանները մեծ մասամբ կարելի է համարել կորուսյալ, եթե որոշ մասը քիչ թե շատ պահպանել են իրենց ճարտարապետական տեսքը, ապա մեծամասնությունն ուղղակի ոչնչացվել է կամ էլ գտնվում է վատթարագույն վիճակում: Ահա այս լուսանկարները փաստեր են այն մշակութային

ժառանգության, որն Առաջին աշխարհամարտի տարիներին՝ Հայոց ցեղասպանության օրերին զրկվեցին իրենց տերերից:

Այս լուսանկարները կարևոր են նաև նրանով, որ թույլ են տալիս մեզ հասկանալ, որ միայն մարդկային կորուստը չէ ցեղասպանության անվանն արժանի, այլ նաև այն ամենի ոչնչացումը, ինչն արարվել է տվյալ ազգի կողմից: Սա թույլ է տալիս մեզ ցեղասպանության դրվագներ պարունակող լուսանկարների կողքին լիարժեքորեն դնել Ա. Վրույրի հավաքածուի՝ Անիի պեղումների ժամանակ արված լուսանկարները:

**Անի քաղաքի կորուսյալ հուշարձանները (The lost monuments of town Ani)**

Դեռևս 2011թ. հրատարակվեց Անի ՌԾ (1050) գիրք-ալբոմը, որում հեղինակային խումբը ներկայացրեց Անի միջնադարյան քաղաքի պատմությունը և այսօրվա վիճակը [Կարապետյան Ս., Անի ՌԾ, Երևան, 2011]: Այստեղ ուշադրություն հրավիրվեց մի փաստի վրա. հայկական միջնադարյան մշակութային ժառանգության համար Անի քաղաքի հայկական հուշարձաններն աղետալի վիճակում էին գտնվում: Հետաքրքիր է, որ հեղինակային խմբի կողմից հիմնականում ներկայացված էին ճարտարապետական կոթողների լրիվ կամ մասնակի ոչնչացումների փաստեր: Այս առումով պետք է նշենք, որ այս հատվածում կփորձենք դիտարկել Ա. Վրույրի լուսանկարների հավաքածուում առկա հուշարձանների և այսօրվա Անիի նույն հուշարձանների վիճակի քննությունը՝ թերևս հիմնականում օգտվելով Ս. Կարապետյանի վերոնշյալ գիրք-ալբոմի հստակ օրինակներից՝ մեծ ուշադրություն դարձնելով թուրքական պետության կողմից կատարվող մշակութային մի շարք անթույլատրելի գործողությունների վրա: Նախ նշենք, որ այս իրավիճակը սկսեց 1918թ. թուրքական զորքերի՝ Անի ներխուժումից: Հիշեցնենք, որ տեղի ունեցավ ամբողջ հնագիտական կատարված աշխատանքի ոչնչացում: Անկասկած, փրկություն էր պեղումների ընթացքում գտածոների տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն և իհարկե այն գիտական հետազոտությունները, լուսանկարները, որոնք կատարվեցին պեղումների ընթացքում: Սա իհարկե առաջին հարվածն էր էթնիկ մշակութային միջավայրի ոչնչացման կապակցությամբ: Հետագա ոչնչացման կամ յուրացման փորձը սկսել է արդեն 1990-ական թթ., որի հիմնական նպատակը, ըստ ուսումնասիրողների ոչ այնքան հայկական միջնադարյան քաղաքի հուշարձանների ուսումնասիրությունն է եղել, որքան մշակութային արժեքավոր հուշարձանների ինչպես ֆիզիկական, այնպես էլ գիտական առումով ձևախեղումը: Որպես այդպիսին հստակ փաստ է Անիի Տիգրան Հոնենցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արտաքին տեսքի դիտարկումը: Այսպես, Ա. Վրույրի լուսանկարում այս հուշարձանի գմբեթային հատվածը կանգուն չէ, քանդված է հիմնականում գմբեթն ավարտող հատվածը, որում պետք է լինի խաչը: Նույն հուշարձանի ժամանակակից լուսանկարները ցույց են տալիս մասնակի «վերականգնումը» հուշարձանի, որն իհարկե հուշարձանի ձևախեղման խայտառակ փորձ է հիշեցնում: Այստեղ տեսնում ենք գմբեթի թեք վերականգնում, որի միջոցով դժվարությամբ կարելի է նշմարել տվյալ կառույցի ճարտարապետական առանձնահատկությունները: Եթե

**Տիգրան Հոնենցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ** եկեղեցու դեպքում մասամբ տեղի է ունեցել ձևախեղում, ապա նույնը չի կարելի ասել Տեկորի, Խծկունքի, Սբ. Առաքելոցի, Մայր տաճարի, Ամենափրկիչի, Հովվի եկեղեցիների և այլ հուշարձանների մասին, որոնք, առանձին-առանձին լինելով հայկական միջնադարյան մշակույթի լեգենդար կոթողներ, այսօր զրկված են հուշարձանային մակարդակ ապահովող բոլոր միջոցներից: Առանձին-առանձին անդրադառնանք առանձին յուրաքանչյուր կոթողին: Ա. Վրույրի հավաքածուում **Տեկորի** տաճարն ամբողջովին պահպանված է, սրա միայն արևելյան կողմի պատն է մի քիչ վնասված: Սա XX դարի սկզբի գիտարշավի ընթացքումարված լուսանկար է, որին հաջորդում է արդեն թուրքական արշավանքը 1918թ.: Ինչքան էլ փորձենք լայն դիտարկել այս կոթողի ժամանակակից վիճակը, բացարձակ չի կարող հիմնավորվել, որ մի ամբողջ հուշարձանից կարող է մնալ միայն արևելյան պատի մի հատված, որը իհարկե պատկերացում անգամ չի կարող տալ այս հուշարձանի պատմամշակութային արժեքի մասին, որն այսօր արդեն կորուսյալ է: **Սբ. Փրկիչ** կամ Ամենափրկիչ եկեղեցու ճակատագիրը ևս Տեկորի տաճարից քիչ է տարբերվում: Եթե 1912թ. Ն. Մառի գլխավորած արշավախմբի կողմից այս հուշարձանն ամրացվել է, ապա 1920 թ.-ից սկսված հուշարձաը շրջակա բնակչության համար շինարարական հումք է եղել, որի պատճառով կանգուն է այս եկեղեցու միայն կեսը, այն էլ այս շարունակության հետևանքով կարող է ուղղակի ոչնչանալ ամբողջովին: Պետք է նշել, որ բացի պաշտամունքային կառույցներից, նույն ճակատագրին են արժանացել նաև ամրոցներն ու բերդերը: Այսպես, **Տիգնիսի** բերդը, որը Ա. Վրույրի հավաքածուի լուսանկարում ամբողջովին կանգուն է, և իհարկե կան նաև վնասված հատվածներ, ապա այսօր այս բերդը վերածվել է քարակույտի, իհարկե սրան են նպաստել հուշարձանի քարերը՝ որպես տեղի բնակչության բնակարանային շինարարական հումք, որը վկայում է 1920 թ. սկսած հայկական հուշարձանների հանդեպ վերաբերմունքի մասին: Նույն ճակատագրին են արժանացել **Մայր տաճարը**, որի պատերը ենթարկվել են ինչպես վայրագությունների, այնպես էլ որպես շինանյութ են ծառայել շրջակա թուրք և քուրդ բնակիչների համար: **Խծկունքի** հնգաեկեղեցի ճարտարապետական հրաշալի կոթողից այսօր պահպանվել է միայն մեկը, որն էլ գտնվում է կիսավեր վիճակում: **Հովվի եկեղեցին,** որը հավաքածուի լուսանկարում թերևս ամբողջական կոթող է, այսօր պահպանված է միայն մի փոքր հատվածը, որը բացարձակ չի ներկայացնում այն հուշարձանը, որը մենք տեսնում ենք Ա. Վրույրի լուսանկարում:

Այսպիսով, Ա. Վրույրի լուսանկարների հավաքածուի վերոնշյալ բոլոր օրինակները կորուսյալ հուշարձաններն են միջնադարյան Անի քաղաքից, որոնք հայ էթնոսի ճարտարապետաշինարարական, պաշտամունքային, ինչու չէ նաև աշխարհիկ կյանքի կենդանի վկաներն էին տվյալ տարածքում բնակեցված լինելու մասին: Սակայն այս լուսանկարներից զատ կա նաև այսօրվա իրականությունը, որում գտնել այս հուշարձաններն ուղղակի անհնարին է:

**Վերջաբան**

Այսպիսով, վերոգրյալը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Ա. Վրույրի հավաքածուի այն լուսանկարները, որոնք պատկերում են Անի քաղաքի մի շարք հուշարձաններ. եկեղեցիներ, բերդեր, ամրոցներ, ճարտարապետական այլ կառույցներ կարելի է համարել որպես հայկական մշակութային ժառանգության այնպիսի նմուշներ, որոնք կրում են հայ ժողովրդի մշակութային արժեհամակարգը, իսկ XX դարի սկզբին՝ հայ ժողովրդի տեղահանումից ու ոչնչացումից հետո, թուքական իշխանությունները ձեռնամուխ եղան նաև հայ ժողովրդի ստեղծած մշակութային ժառանգության ոչնչացմանը, որի արդյունքն էլ հենց վերոնշյալ հուշարձանների ամբողջովին կամ մասնակի ոչնցացումն է: Դիտարկելով Ա. Վրույրի հավաքածուի այս լուսանկարները, տեսնում ենք դրանց պահպանվածությունը XX դարի սկզբին: Ահա և տվյալ լուսանկարների դիտարկումն էլ թույլ է տալիս համոզմունք հայտնել, որ այս նկարները ևս պարունակում են այն գաղափարը, որ ցեղասպանության ենթարկված մի ամբողջ ժողովրդի մշակութային ժառանգության ոչնչացումն ընկալելի է որպես փաստ, որ խոսուն ապացույց է Մեծ եղեռնի՝ Ցեղասպանության: 1890-ականներից սկսած տեղի ունեցան հայ ժողովրդի մասսայական կոտորածներ, որին հաջորդեց 1918թ. թուրքական արշավանքի ընթացքում նաև հայկական հուշարձանների մասսայական ոչնչացումը: Իսկ 1990-ական թթ. թուրքական հնագիտական պեղումների ընթացքում հայ մասնագետների ներգրավված չլինելը, նաև հուշարձանների ժամանակակից վիճակը թույլ է տալիս հստակ պատկերացնել, որ այսօր էլ շարունակվում է հայկական մշակութային ժառանգության ոչնչացում:

## ՀԱՎԵԼՎԱԾ

1. Սբ. Փրկիչ եկեղեցի

2. Տիգրան Հոնենցի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գմբեթը

3. Առաքելոց վանքի ճակատամասի զարդանախշերը

4. Մայր տաճարի տեսքը հարավ-արևելքից

5. Գագիկ Բագրատունու արձանը

6. Հատված Անի մայրաքաղաքից

7. Արամ Վրույրը խաչքարի մոտ՝ Անիում

8. Տեկորի տաճարը

9. Տիգնիսի բերդը

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Արտաշես Վրույր, Անիում, Երևան, 1964, էջ 3:
2. Գրիգորյան Խ., Լուսանկարը թանգարանային ցուցադրության համատեքստում, «*Թանգարան հանդես*», Երևան, 2011 թ., էջ 154:
3. Կարապետյան Ս., *Անի ՌԾ*, Երևան: Ա. Հ., 2011թ:
4. Crowe, Darryn (Culture/Communication/Media Studies Program, U Natal, Durban, South Africa), Objectivity, Photography, and Ethnography, Cultural Studies - Critical Methodologies, 2003, 3, 4, Nov, 470-485.
5. Halbwachs Maurice, *On Collective Memory*, Edited, Translated, and with an Introduction by Lewis A. Coser, Chicago and London: The University of Chicago Press, 1992, pp. 37-51
6. Cobley Paul and Haeffner Nick, “Digital Cameras and Domestic Photography: Communication, Agency and Structure,” *Visual Communication 8,* 2009, p. 125.
7. Barthes Roland, «The Photographic Message,» in Barthes Roland, *Image-Music-Text*, Ed. and trans. Stephen Heath, New York: Hill, 1977. 15-31.
8. Jay Ruby, “Visual Anthropology,” in *Encyclopedia of Cultural Anthropolog*y, ed. by David Levinson and Melvin Ember, New York: Henry Holt and Company, vol. 4: 1996.
9. Sontag Susan, *On Photography*. New York: Delta, 1973, pp. 175-178.
10. Бодрийяр Жан, *Систем Вещей*, Москва: Рудомино, 2001г., http://yanko.lib.ru/books/philosoph/baudrillard-le-systeme-des-objets-8l.pdf/.
11. Հավելվածում օգտագործվել են Հայոց ազգագրության թանգարանի ֆ. ֆոնդի 128, 154, 157, 180, 246, 328 համարի լուսանկարները:

## ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ. Ա. ՎՐՈՒՅՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Խորեն Գրիգորյան*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ն. Մառի կողմից XIX դարի վերին և XX դարի սկզբին միջնադարյան Անի քաղաքում կազմակերպված հնագիտական պեղումները համընկնում են Օսմանյան կայսրությունում հայկական տեղահանությունների և զանգվածային կոտորածների հետ: Պեղումների ժամանակ Արամ Վրույրի կողմից արված լուսանկարներն արժեքավոր վկայություններ են Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի ոչնչացման վերաբերյալ: Անիի որոշ վանքեր և հուշարձաններ, որոնք լունկարվել են Արամ Վրույրի կողմից, ներկա պահին անհետ ոչնչացված են համարվում: Այս հուշարձանները մեծամասամբ կորսված են. որոշ կառույցների ճարտարապետական տեսքը դժվարությամբ է ուրվագծվում, մեծամասնությունն էլ ավերված է: Այս նկարները կարևոր են նաև այն առումով, որ մեզ թույլ են տալիս հասկանալ, որ ցեղասպանություն են համարվում ոչ միայն մարդկային կորուստները, այլ նաև ազգի մշակութային ժառանգության ոչնչացումը:

**Բանալի բառեր՝** լուսանկարներ, թանգարան, Վրույր, եկեղեցի, հավաքական հիշողություն:

## THE LOST MONUMENTS. THE PHOTO COLLECTION OF A. VRUYR AND THE ARMENIAN GENOCIDE

*Khoren Grigoryan*

ABSTRACT

The late XIX century and early XX century's excavations in the medieval city of Ani organized by Nicholas Marr coincided Armenian deportations and massacres of disaster taken by the Ottoman Empire conducted by the New Turkey. During this excavation a number of photographs were made by Aram Vruyr (father of Artashes Vruyr who was in Marr's expedition) can not be bypassed displacement and destruction of an entire nation and cultural heritage during World War I. During this excavation legendary monasteries and monuments of Ani that it is impossible to find today are photographed by Aram Vruyr. These monuments are largely considered to be lost some of them are barely keeping their architectural appearance most are destroyed. These photos are also important because that allow us to understand Genocide is not only the loss of human, but also all the destruction, which was created by a nation.

**Keywords:** photos, museum, Vruyr, church, collective memory.

# УТРАЧЕННЫЕ ПАМЯТНИКИ: ФОТОКОЛЛЕКЦИЯ А. ВРУЙРА И ГЕНОЦИД АРМЯН

*Хорен Григорян*

РЕЗЮМЕ

Археологические раскопки в средневековом городе Ани, организованные Марром в конце XIX в. и в начале XX в., совпали с началом депортаций и массовых убийств армян в Османской империи. Фотографии сделанные Арамом Вруйром во время раскопок являются бесценными свидетельствами уничтожения культурного наследия армянского народа во время Первой мировой войны

Некоторые из монастырей и памятников Ани, сфотографированные во время раскопок Арамом Вруйром, в настоящее время являются бесследно исчезнувшими. Эти памятники в значительной степени считаются потерянными: архитектурный облик некоторых из них прослеживается с трудом, а большинство разрушено. Эти фотографии важны также тем, что позволяют нам понять, что Геноцидом являются не только человеческие потери, но и уничтожение культурного наследия нации.

**Ключевые слова:** фотографии, музей, Вруйр, церковь, коллективная память.